


657



1930—31 թ.


ԳՅՈՒՂՄԻԵՍՀԱՐԿԻ
ԵՐՏԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ Z. U. Խ. Z. ՖԻՆՔՈՂԿՈՄԱՏԻ

22

22

22



1930—31 թ.

ԳՅՈՒՂՄԻԱՆՀԱՐԿԻ
ԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

A 24276



ՀՐԱՄԱԿՈՒԹՅՈՒՆ Z. U. Z. ՖԻՆՔՈՂԿՈՄԱՆԻ

Հայպովեզբաֆի տպ. սլամ. № 2515

Գրառեալ. № 5153 (р) Տիրաժ 5000

1930-31 ԹՎԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԿԻ
ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դյուլատնաեսության սոցիալիստական վերակառուցման և զարգացման հարցը Խորհրդային իշխանության առենսական և հիմնական խնդիրներից մեկն և կազմում:

Դյուլապում կիրառվող բոլոր ձեռնարկումների մեջ կարմիր թելի նման անցնում և չքավոր և միջակ գյուղացիության տնտեսական վերելքի խթախուսումը: Հենց դրա համար, այսոր ծավալվում և գյուղատնտեսության կոլլեկտիվացման, նրա սոցիալիստական վերակառուցման, հաղթական յերթը:

Սոցիալիզմի կառուցման նման արագ տեմ ովը կատաղեցնում և գյուղի դասակարգացյին մեր թշնամուն—կուլտիվին և ուժեղացնում նրա դիմադրությունը:

Շնորհիվ կուսակցության և իշխանության քաղաքականության, վորք արտահայտվում և գյուղում՝ ա) կոլխոսինարարության ծավալման, բ) համատարած շրջանում կուտակությունը վորսես դասակարգի վերացման, գ) մյուս աեղերում նրա շահագործման խիստ սահմանափակման և դ) չքավալվոր ու միջակ գյուղացիության տնտեսական ոգնության մեջ՝ ավելի յես սրվել դասակարգացյին պայքարը:

Սոցիալիստական ձեռվ վերակառուցման գյուղատնտեսության այս մեծ գործի ճանապարհին դեռ կան խոշոր դըմքարություններ, վորի հաղթահարման համար պետք է ավելի ուժեղացնել աշխատանքները չքավորների և միջակների մեջ, նպաստել նրանց տնտեսական վերելքին, ներդրավել կոլխոզներում, զարկ տալով կոլլեկտիվ տնտեսությունների

կազմակերպմանը ու նրա տնտեսական բաղայի ամրապնդմանը:

Գյուղատնտեսության կոլեկտիվացմանն ել ավելի նրապաստելու, նրանց յեկամուտները բարձրացնելու համար չեխնայվում վոչ մի միջոց և Խորհրդային իշխանությունն այս տարվա գյուղհարկի որենքում մտցրել ե այնպիսի փոփոխություններ ու արտոնություններ, վորոնք լիովին ապահովում են կոլտնտեսությունների զարգացումն ու աճումը:

Սակայն մեզ մոտ դեռ կան նաև անհատ աշխատավորական տնտեսություններ:

Այդ տնտեսությունների շահերը նկատի ունենալով, նոր որենքը վոչ միայն չի սահմանափակել անցյալ տարիներում նրանց տրվող արտոնությունները, այլ և ավելի յելայնացրել այն:

Զքավորական և միջակ տնտեսությունների համար սահմանվել են նորանոր արտոնություններ, վորապեսզի նբանք կարողանան բարձրացնել իրենց տնտեսությունը, ավելացնեն ցանքերի և կուլտուրական մշակույթների տարածությունն, անասունների քանակն ու լիակատար հնարավորություն ունենան բավարարել իրենց կարիքները:

Այս տարի նույնպիս հիմնականում ապահովված ե բալոր չքավոր տնտեսությունները հարկից աղատելու, միջակի հարկը թեթևացնելու և հարկի զգալի ծանրությունը կուլտիկային տնտեսությունների վրա դնելու խնդիրը:

Այսպիսով գյուղեարկի որենքը մշակելիս, ուշադրության են առնված վոչ միայն կոլեկտիվ այլ և անհատ աշխատավորական տնտեսությունների շահերը:

Այժմ տեսնենք, թե ինչպիսի արտոնություններ են պարզաված այդ տնտեսությունների համար:

1. ԿՈԼԵԿՏԻՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐԿԸ ՀԱՇՎԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Մինչև այժմ բոլոր տնտեսությունների հարկը հաջոված եր ողբողքասիվ սկզբունքներով:

Վորքան շատ եր յեկամուտը, այնքան բարձր եր լինում
նրա հարկը, սակայն վոչ թե համեմատական—այլ կրկնակի,
յեռակի չափերով:

Որինակ՝ յեթե մի տնտեսութուն ուներ 300 ռ. յեկա-
մուտ, հարկ եր վճարում 39 ռ. 75 կոպ., իսկ մյուսը վորը
ուներ 600 ռ. յեկամուտ, վճարում եր 120 ռ. 75 կոպ., այդ-
պիսով յերկրորդի հարկը վոչ թե յերկու անգամ եր աղելի
տառջինի հարկից, այլ մի քանի անգամ, չնայած նրան, վոր
նրա յեկամուտը միայն 2 անգամ ե ավելի:

Սա պրոգրեսիվ հարկման ձևն ե: Հարկը հաշվելու այս
իրարկը նոր որենքով պահպանված ե միայն անհատ տնտեսու-
թյունների համար:

Կոլեկտիվ տնտեսությունների հարկը հաշվելու ձևը
փոփոխված ե և պրոգրեսիվ սկզբունքի փոխարեն սահման-
վել ե արտոնյալ, համեմատական սկզբունքը: Անցյալ տարի
կոլեկտիվ տնտեսության հարկը հաշվվում եր մեկ չնչին
ընկենող յեկամտի համեմատ: Վորքան բարձր եր չնչին ընկ-
նող յեկամուտը, այնքան բարձր դրույքներով եր հաշվվում
հարկը: Այս տարի ընդհակառակը՝ հարկը պետք ե հաշվվի
միայն մի դրույքով անկախ կոլտնտեսության յեկամտի
չափից:

Կոլեկտիվի հարկը պիտի հաշվվի նրանց յեկամտի 5 տո-
կոսի չափով, այսինքն 100 ռուբլուց հարկ պիտի վճարի 5
ռուբլի, իսկ կոմունաներինը—4 տոկոսի չափով:

Հարկելու այս դրույքները սահմանված են այնպիսի կոլ-
տնտեսությունների և կոմունաների համար, վորոնք դեռ
չունեն կանոնավոր հաշվապահություն:

Ցերե կոլտնտեսությունների յեկամուտը ընդունվի հաշ-
վապահության նիշտ տվյալներով, այն ժամանակ նա հարկ
պետք ե վճարի ել ավելի պակաս դրույքով:

Այս դեպքում նրա հարկը հաշվվելու յե յեկամտի միայն
3 տոկոսի չափով, իսկ կոմունաներինը՝ 2 տոկոսի չափով:
Որինակ՝ մի դյուզի կոլեկտիվը եր հաշվապահության

տվյալներով ստացել ե 10,000 ռ. յեկամուտ: Նրա հարկը պետք ե հաշվվի 3 կոպ. դրույքով՝ ընդամենը 300 ռ.: Մի ուրիշ գյուղում կոլեկտիվը նոր ե կազմակերպվել, դեռ չունի կանոնավորված հաշվապահություն: Այս կոլեկտիվի յեկամուտի աղջյուրների համեմատ նորմաներով պետք ե վորոշել նրա յեկամուտի ընդհանուր գումարը: Դիցուկ յեկամուտը 10,000 ռ. յե, հարկը պիտի հաշվել արդեն 5 կոպեկ դրույքով, վորը կկազմի 500 ռուբլի:

2. ՍԱԿԱՎԱԶՈՐ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՏՐՎԱԴ ԱՐՑՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գրոլետարական պետության գլխավոր խնդիրներից մեկն ե՝ նպաստավոր պայմաններ ստեղծել գյուղացիական չքավոր և միջակ տնտեսությունների զարգացման համար:

Բոլոր ասպարիզներում ամեն տեսակի ոգնություն հասցընելով աշխատավոր գյուղացիությանը, նա այս տարրաւորենքի մեջ պահպանել ե հիմնական իր այն գիծը, վոր չըքավոր գյուղացիաւրյունը բոլորովին ազատվի հարկից, թերևացնի միջակի հարկը և հարկի ամբողջ ծանրությունը ընկնի կուլտակային տնտեսությունների վրա:

Զհարկվող մինիմումը՝ (այսինքն յեկամուտի են ամենամեծ գումարը, վոր հարկից ազատվում ե) անփոփոխ թողնելու հետևանքով այս տարի գյուղհարկից բոլորովին պիտի ազատվեն բոլոր չքավոր և սակավունակ այն տնտեսությունները, վորոնք ունեն՝

ա) մինչև 110 ռուբ. նորմաներով հաշված յեկամուտ և 1—2 շունչ.

բ) մինչև 130 ռուբ. յեկամուտ և 3—4 շունչ.

գ) մինչև 150 ռուբ. յեկամուտ և 5-ից ավելի շունչ:

Հարկից պետք ե ազատվեն նմանապես այնպիսի տնտեսությունները, վորոնց մեկ շնչին ընկնող յեկամուտը 20 ռուբ. պակաս ե:

Որինակ յեթե տնտեսությունն ունի 4 շունչ և 145 ռ. յե-

կոմուտ, նա ազատվելու յի հարկից, վորովանակ յեկառագում դումարը չի անցնում չհարկվող մինիմումից:

Մ իուրիշ անտեսություն ունի 8 շունչ և 155 ո. յեկառագում: Նա նույնապես պետք է աղասիի հարկից, քանի վորչնին ընկնող յեկառագումը 20 ո. պակաս է:

Ընթացիկ տարում հարկից աղասիվող անտեսությունների թիվը պետք է լինի վոչ պակաս անցյալ տարվանից և կը կազմի Հայաստանի բոլոր գյուղական անտեսությունների մոտ 60 տոկոսը:

Կոլլեկտիվ տնտեսությունների համար սահմանված է առլեի բարձր չհարկվող մինիմում: Յեթե նրա ամեն մեկ շնչին ընկնող յեկառագումը 30 ո. ավելի չե, կոլլեկտիվը հարկ չախտի վեարի բարորնվին:

Այս մինիմումը վորոշված է այնպիսի կոլլեկտիվ անտեսությունների համար, վորոնց յեկառագումը գումարը հաշվվում է նորմաներով:

Յեթե կոլտնտեսության յեկառագումը վորոշվում է հաշվակության նիշտ տվյալներով, այդ դեպքում նա ազատվում է հարկից, յեթե շնչին ընկնող յեկառագումը 60 ռուբլուց չի անցնում:

Որինակ՝ մի կոլտնտեսություն ունի նորմաներով հաշված յեկառագում 10000 ո. և բաղկացած է 400 շնչից: Նա պատվում է հարկից, վորովհետեւ մեկ շնչին ընկնում է 25 ռուբլի: Յեթե նա ունենար վոչ թե 400 այլ 200 շունչ և նույն յեկառագումը, նա հարկ պետք է վճարեր, վորովհետեւ նրա ամեն մի շնչին ընկնող յեկառագումը հաշվված նորմաներով 30 ռուբլուց բարձր է:

Այդ նույն կոլլեկտիվը 200 շնչով կազատվեր հարկից այն դեպքում, յեթե նրա 10000 ո. յեկառագումը վորոշվեր հաշվապահության տվյալների համաձայն:

3. ԿՈՂԵԿՑԻՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՏՐՎՈՂ ՀՐԱՑՈՒ- ՑԻՉ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դրանով սակայն դեռ չի սահմանափակվում կոլտնտե-
սություններին տրվող արտոնությունները:

Կոլտնտեսության չքավոր անդամները, վորոնք անցյալ
տարի ազատվել են գյուղմիասնական հարկից, նրանց ցան-
քերի և անասունների յեկամուտներից զիջվում և 75 տոկոս
և միայն յեկամտի մնացած 25 տոկոսն է հարկի տակ ընկ-
նում:

Որինակ՝ մի կոլտնտեսության մեջ մտել են անցյալ տա-
րի հարկից ազատված 20 չքավոր տնտեսություններ և 40
միջակներ: Դիցուկ չքավորների ցանքի և անասունների յե-
կամուտը հավասար է 3000 ռ., իսկ միջակներինը 6000 ռ.:
Կոլեկտիվի ընդհանուր յեկամուտը հավասարվում է 9000
ռուբ.: Հարկի յենթակա յեկամուտը սակայն պետք է լինի
ավելի քիչ, վորովհետեւ չքավորների 3000 ռ. յեկամտից
պետք է զիջվի 75 տոկոս: Կմնա 750 ռ. կոլեկտիվի հարկվող
յեկամուտը հավասար կլինի 6000 ռուբ.+750 ռ.=6750 ռ.:
Ուրեմն 9000 ռ. յեկամտի փոխարեն պիտի հարկի ընդա-
մենը 6750 ռ.:

Այս տարի, բացի թված արտոնություններից, վորոշ-
ված և տալ լրացուցիչ արտոնություններ բոլոր կոլտնտե-
սություններին և նրանց անդամ անհատ տնտեսություննե-
րին: Ինչպես որինակ՝

Առաջինը յերկու տարի շարունակ (1930-31 և 1931-32
թ.) կոլտնտեսության բոլոր անասունները (կովերը, մտ-
տակները, յեզները, գոմեչները, բուղաները, ձիերը, ջորի-
ները, ուղաները և եշերը) ազատվում են գյուղհարկից:

Յերկրադր այն բոլոր հողամասերը, վորտեղ կոլտնտե-
սությունը այս կամ յեկող տարի առաջին անդամ բանջարե-
ղեն կցանի (սոխ, վարունգ, բաղրջան և այլն) յերկու տարի
շարունակ ազատվում են գյուղհարկից:

Յերբորդը կոլտնտեսության հին բանջարանոցների և
բոստանների յեկամոււտները այս տարի յերկու անգամ պա-
կաս և հաշվվում քան անցյալ տարի յեր:

Այսինքն այն հողերը, վորոնք մի քանի տարի շարունակ
ցանվել են բանջարեղենով և վորոնք այս տարի ևս կցանվեն
բանջարեղենով նրանց յեկամափ նորման կիսով չափ կիջեց-
վի, վորի հետեանքով հարկը նույնազես մեծ չափով կպա-
կասի:

Այդ բոլոր արտոնությունները տրվում են միայն կոլ-
տնտեսություններին:

Դրա հետ միասին, ազատվում են կոլտնտեսությունները
վճարելուց իրենց այն պարտքերը, վորոնք հաշվվում եյին
այն կուլակային տնտեսությունների վրա, վորոնց դույքը
բռնադրավվել և կոլտնտեսության և հանձնվել:

Բացի դրանից կոլլեկտիվի անդամ տնհատական տնտե-
սություն ունեցողներին ևս տրվում են խոշոր արտոնու-
թյուններ:

Առաջինը՝ այդ անդամների, անհատական տնտեսու-
թյուններում յեղած բոլոր կովերը, մատակները, ցուլերը,
վոչչարները և այծերը յերկու տարի շարունակ ազատվում
են գյուղհարկից և

Յերկրորդը՝ կոլտնտեսության բոլոր անդամները, վո-
րոնց տուգաննել են վարչական կամ դատական կարգով, այս
կամ այն պարտագիր վճարները, ինքնահարկը կամ գյուղ-
հարկ չվճարելու համար նույնազես ազատվում են այդ տու-
գանքները վճարելուց և այդպիսի անդամների դեմ հարու-
ցած բոլոր դործերը այլես դադարեցվում են:

Դյուղական կոմունաների համար սահմանված է լրա-
ցուցիչ արտոնություն: Յեթե վորեւ գյուղական կոմմունա
նաևաչվի սակավութակ, նրա հարկից պետք է զիջվի 50 տո-
կոր:

4. ՑԱՆՔԵՐԻ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՆ ՀՆԴԱՐՁԱԿԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ, ՏՐՎՈՂ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անցյալ տարվա նման, այս տարի ևս հարկից պետք է ազատվեն ցանքերի ավելացած տարածությունները համեմատած 1928 թվի հետ:

Սա նշանակում է, վոր յեթե մի աշխատավոր գյուղացի 1928 թվին ցանել է գիցուկ 4 հեկտար, իսկ այս տարի նա ցանի 6 հեկտար, նրա 2 հեկտար ավելի ցանքը ազատվելու յե հարկից:

Ուրեմն յեթե վորեւ մեկը նույնիսկ կրկնապատկի իր 1928 թ. ցանեի կամ յեռապատկի նա ավելացրած տարածության համար հարկ չպիտի վճարի:

Այս արտոնությունը սակայն չի տարածվելու բամբակացան շրջաններում ջրովի հողերում կատարած հացահատիկային ցանքերի վրա:

Բամբակի նոր շրջաններում ավելացրած տարածությունը համեմատած 1929 թ. հետ, նմանապես ազատվում են հարկից:

Եեթե մի տնտեսություն անցյալ տարի ցանել է գիցուք 2 հեկտար, իսկ այս տարի 3 հեկտար՝ նրա մեկ հեկտար ավելացած տարածությունը ազատվելու յե հարկից:

Նոր հողամասում ցանած բամբակը ազատվում է հարկից 5 տարի ժամանակով:

Տեխնիքական մշակույթների տարածությունը լայնացնելու պատճառով, բացի վերոհիշյալից, սահմանվում են ավելի լայն արտոնություններ: Որինակ՝ բամբակի ցանքացանառության մեջ մտնող առվայրը (յոնջա) մեկ տարով ազատվելու յե հարկից:

Զնայած այն բանին, վոր բամբակի յեկամուտը բարձր է հացահատիկների յեկամտից այնուամենայնիվ բամբակի նորման ավելի պակաս ե քան հացահատիկի ցանքի նորման:

Բամբակը հարկվելու յե հացահատիկի համար սահմանված հանրապետական նորմայի կիսի չափով:

Հացահատիկի յեկամափի նորման վորոշված է 52 ու հետեւապես բամբակի յեկամափի նորման պիտի լինի 26 ռուրլի:

Ընդհանրապես վարելահողը, խոպան և խամ հողամտութերը ողտագործելու համար տրվում է ամենամեծ արաւնությաններ:

Ամեն մի տնտեսություն ինքը պիտի շահագրդոված լինի ավելացնելու ցանքերը, հաշվելով վոր ոգուտից բացի վոչ մէ քնառ նա չունի, և նույնիսկ այդ ավելի ցանված տարածությունից ստացած յեկամուտից հարկ չի վճարում:

Հայաստանում կան ահագին քանակությամբ վեր ընկած խոպան և խամ հողեր, վորոնց պիտանի դարձնելու համար հարկավոր ե թափել վորոշ աշխատանք:

Վոչ պիտանի հողամասերը մշակելի դարձնելու դեպքում, յերկու տարի շարունակ պիտի ազատվեն հարկից:

5. ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՏՐՎՈՂ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աշխատավոր գյուղացու համար բավական չի ավելացնել միայն ցանքերի տարածությունը: Նրա տնտեսության ամրապնդումը, բարգավաճումը և բարորությունը կախված ե այն արդյունքից, վոր նա ստանում ե իր ցանքերից և անառուններից:

Շատ բան կախված ե բերքատվությունից: Մեկ հեկտար ցանքից կարելի յէ ստանալ և 40 փութ և 100 փութ բերք: Կանոնավոր մշակելու (հողը պարաբացնելու, կանոնավոր վարելու հողը) գեղքում ստացվում ե լավ արդյունք և ընդհակառակը՝ անմշակ թողնելիս, ստացվում ե միջին բերքից պակաս:

Վորպեսզի գյուղացին շահագրգուված լինի հողի բերքատվությունը և անառունների արդյունավետությունը բարձրացնելու, գյուղհարկի նոր որենքը տալիս և արտոնություններ այնպիսի տնտեսություններին, վորոնք այդ նպատակով գործնականում թեկուղ ամենահասարակ միջոցներ են կիրառում:

Որինակ՝ հողը պարարտացնում են գոմաղբով, հանքային պարարտանցութերով և կամ կանաչ պարարտացնում են գործնականում, վորը արագությամբ աճելով, հավաքում և հողի ստորին շերտերի նյութերը:

Յանքաշրջանառության ասպարիզում, կիրառում են բողմաղաշտային ձեր, հողը վարում են նոր և տվելի կտուտելագործված գործիքներով, դարնանացանի հողը վորում են աշնանը, հողը հերկում են վաղ գարնանը. կիրառում են սեահերկը, շարքացանը և շարքերով տնկելը, ճահճոտ հողերը ցամաքեցնում են, դաշտերը մաքրում են քարերից, կովում են վնասատուների և մուշախոտերի դեմ, անասուններին խնամում են, կերակրում կանոնավոր և այլն. Մի խոսքով կիրառում են ագրոմինիմումը:

Տեղական գյուղատնտեսի ցուցմունիքներով բերքատվությունը բարձրացնող պարզ և հասարակ մեկ կամ մի քանի միջոցներ կիրառող աշխատավոր տնտեսություններին, բացի այն ոգուտից, վոր նրանք ստանում են լավ բերքից, տրվում ենակ գյուղհարկից առանձին գեղջեր:

Այսպես՝ բազմադաշտային ցանքաշրջանառություն կիրառող կոլեկտիվ տնտեսությունների ցանքի նորման պետք ե իջեցվի 15 տոկոսով, իսկ անհատ տնտեսությանը 10 տոկոս: Բերքատվությունը բարձրացնող այդ միջոցները կիրառող անհատ տնտեսությունների հարկից զիջվելու յե 5 տոկոս, իսկ կոլեկտիվ տնտեսությունների հարկից 10 տոկոս:

Որինակ՝ մի զյուղի համայնք վորոշել և անցնել բաղմաղաշտային ցանքաշրջանառության և պարարտացնել վորոշմակույթներ զոմաղբով: Յեթե անհատ տնտեսությունները կիրառում են այդ միջոցները, այն ժամանակ նրանց ցանքի նորման, դիցուք 40 ռ. իջեցվում և 10 տոկոսով, այսինքն ցանքի յեկամուտը 40 ռ. փոխարեն հաշվվելու յե 36 ռ., իսկ յեթե այդ կիրառում և կոլեկտիվ տնտեսություններու

ցանքի նորման իջեցվում և 15 տոկոսով՝ այսինքն 40 ռ. փոխարեն հաշվվում և 34 ոռոգվի:

Բացի այդ, հողը պարարտացնելու համար կոլեկտիվ տնտեսության հարկից զիջվելու յե 10 տոկոս, իսկ տնհատ տնտեսության 5 տոկոս:

6. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՃՅՈՒՂԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՏՐՎՈՂ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գյուղատնտեսության հատուկ ճյուղերը զբարդացնելու համար, այս տարվանից արտոնված ձևով են հարկիվելու բանջարանոցներին հատկացրած նոր հողամասերը:

Նոր հողամասում ցանված բանջարանոցները բոլորովին պիտի ազատվեն հարկից:

Հարկից բոլորովին պետք է ազատվեն նաև բանջարանոցներին սերմեր տալու նպատակով սերմարուծարանի համար հատկացրած տարածությունները:

Ուրեմն, յեթե գյուղացին վորոշ աշխատանք թափելուց հետո, կարողացել ե մի հողամաս հարմարեցնել, բանջարանոցի համար, նրա այդ բանջարանոցը պետք է ազատվի հարկից: Նմանապես պիտի ազատվի և այն տարածությունը, վորը հատկացված ե սերմարությանը:

Եթեամապահության գարգացման նպատակներով հարկից բոլորովին ազատվում են թթենու տնկարանները:

Այս տարի հարկից ազատվում ե նաև մեղվարուծությունը:

Մինչդեռ անցյալ տարի հաշվվում և հարկում եյին թեքթոցավոր և թե ըրջանակալոր փեթակները:

Շաբարի նակնդեղի ցանքերը այս տարի բոլորովին ազատվում են հարկից:

Ազատվում է հարկից նաև թռչնարուծությունը:

7. ԿԵՆԴԱԿԲՈՒԹՈՒԹՅԱՆ ՅԵԿ ԿԱԹՆԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՏՐՎՈՂ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ինչպես դաշտամշակության և գյուղատնտեսական հա-

տուկ ճյուղերի համար սահմանված են արտոնություններ, նույնպիսի, թերեւ ավելի մեծ արտոնություններ են տրվում անասնապահությանը:

Անասնապահության գարկ տալու համար, հարկից առաջին հերթին ազատվում են բոլոր տեսակի ցանուիլի խռովարույսները և կերի ճակնդեղը:

Նույն նկատումներով հարկից բոլորովին ազատվելու յե հոդային մարմինների հավանությունը գտած ցույերը և հովատակները (վորձ ձիերը):

Անասունների ցեղը և վորակը բարձրացնելու համար անհրաժեշտ ե ազնվացեղ ցուլեր և հովատակներ: Յեթե հոդային մարմինները հավանություն են տալիս վորձեւ տնտեսությանը պատկանող այդ տեսակի կենդանիներին, դրանց յեկամուտը ազատվում է հարկից:

Այն արտոնությունները, վորոնք տրվում են դաշտամշակության բերքատվության բարձրացման համար (ազգամինիմում) կիրառվում են նաև այն դեպքում, յերբ զյուղացին վորձեւ միջոց և ձեռնորկում անառնեների արդյունավետությունը բարձրացմելու համար (գոտմինիմում):

Յեթե կոլտնտեսությունը կամ անհատ գյուղացիները կիրառեն ամենապարզ և հասարակ միջոց իրենց անասունները պահելու, կերակրելու կամ վորակը բարձրացնելու համար, նրանց գյուղհարկից կատարվելու յե զեղջ: Կոլտնտեսության հարկից զիջվելու յե 10 տոկոս, իսկ անհատ տնտեսությունների հարկից—5 տոկոս:

Անասնապահության համար այս տարի սահմանված են բրացուցիչ արտոնություններ:

Ավելացրած անառնեների ֆանակը բոլորովին ազատվելու յե հարկից:

Սա նշանակում է, վոր յեթե գյուղացին շատացնի իր անասունները նա իր ավելացրած անասունների համար հարկ չպիտի վճարի:

Յենթագրենք մեկը ունեցել և անցյալ տարի 3 կով, 2 յեկ

և 40 վոչխար: Այս տարի նա ունի 4 կով, 3 յեղ և 60 վոշխար: Նրա մեկ յեղը, մեկ կովը և 20 վոչխարը բոլորավին հարկի չեն յենթարկվելու:

Ստեփանավանի, Ղզլոչի և Ազրարայի շրջաններում, վորտեղ զարգացած է կարնամանեսությունը, այս տարի կովերի, մասակների և ցուլերի յեկամուկ նորմաները իշեցվելու յեն կիսով չափ համեմատած նախանցյալ 1928 թվի հետ:

Ուրիմն—յեթե 1928 թվին մի կովի յեկամուկ նորման ուրինակ՝ Ստեփանավանի շրջանում, վորտեղ զարդացած և արդյունաբերական կաթնառնաեսությունը, յեղել ե 24 ռ., իսկ ցուլերինը 18 ռ., այս տարի մեկ կովի յեկամուտը հաշվվելու յե ընդամենը 12 ռ., իսկ յեղանը 9 ռուբլի, այսինքն դյուզացու հարկին ել նույն ձևով իջնելու յե:

Նույն ձևով նաև Ապարանի, Դարձագյազի և Մարտունու շրջաններում վոչխարների և այծերի յեկամուտը պես ե իշեցվի դարձյալ 50 տոկոսվ, այսինքն այդ շրջաններում անհատ տնտեսություններին պատկանող վոչխարների և այծերի յեկամուտը 2 ռ. 50 կոպ. փոխարեն պետք ե հաշվվի 1 ռ. 25 կոպ. :

Այսպիսով յեթե մի տնտեսություն անցրալ տարի ունիցել ե 100 վոչխար և այծ, այս տարի զբանց քանակը դարձել է դիցուք 130 գլուխ, նրա 30 գլուխը ազատվելու յե, իսկ մնացած 100 գլխի յեկամուտը հաշվվելու յե ընդամենը 125 ռ. մինչեւ անցյալ տարի նույն քանակի յեկամուտը պետք ե կազմեր 250 ռուբլի: Այսպիսով յեկամուկ նորման պակասեցնելով իջնում ե և դյուզացու հարկը:

Հատուկ վոչխարաբուծական կոլեկտիվ տնտեսությունների վոչխարները և այծերը նոր որենքով ազատվելու յե հարկից բալարովին:

Ազնվացեղ մանր յեղյուրավոր անասունների զարգացմանը նպաստելու համար թե կոլլեկտիվ և թե առանձին աշխատավորական տնտեսություններին պատկանող մերինուսի,

կարակուլի, կաշտաբուրդ և կիսակոշտաբուրդ վոչխարներն ազատվում են հարկից:

Այս տարի ազատվում են հարկից նաև խողաբուծությունների ու նագարաբուծությունը:

8. ԳՅՈՒՂԱԾՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՔԵՆԱՑԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՐՎՈՂ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խորհրդային Խշանության գլխավոր խողիքներից մեկն և նաև ամեն կերպ խրախուսել և ոժանդակել զյուղացու տրնտեսությունը տանելու ավելի բարձր ու կատարելագործված ձևերով: Գյուղհարկի նոր որենքով բոլոր տեսակի հասարակ գյուղատնտեսական գործիքներից ստացվող յեկամուտները ազատվում են հարկից:

Այսպիսով այս տարի ազատ են հարկից բոլոր տեսակի քամհարներից, սերմազտիչներից, գութաններից և այլ հասարակ գործիքներից ստացված յեկամուտները:

Գյուղատնտեսական բարդ գործիքներից ստացվող յեկամուտները պիտի հարկվեն վոչ թե ամբողջապես, այլ նըրանց միայն մի մասը:

Այսպես կոլլեկտիվ տնտեսություններում նրա 10 տոկոսը, իսկ անհատ գյուղական տնտեսություններում 25 տոկոսը:

Յեթե մի տնտեսություն ունենա, յենթագրենք խոռհար մերենա և մեքենայի շահագործումից ստանա դիցուք 306 ո., որպէս գումարից հարկի պիտի յենթարկի կու տնտեսություններում միայն 30 ռուբլի, իսկ անհատ տնտեսությունում միայն 75 ռուբլի:

Տնայնագործությունից և զանազան արիեստներից բատացվող յեկամուտները նույնպես հարկվում են վորոշ տակոսվ, այլ վոչ թե լրիվ գումարով, յերեւ միայն արիեստավորը կամ տնայնագործը վարձու աշխատանք չի կիրառում:

Արեստավորների և տնայնագործների կողմնակի յեկամուտները հարկի պիտի յենթարկի են ստացված գումարի 50 տոկոսի չափով:

Դիցուկ մի կոչկակար մենակ աշխատելով, անցյալ տուր-
վա ընթացքում ունեցել ե իր արհեստից զուտ յեկամուտ 500
ռ. : Նրա այդ 500 ռ. պետք ե հարկվի միայն 250 սուբլին վե-
րոհիչյալ 500 ռ. փոխարեն:

Կան այնպիսի արհեստավորներ և տնայնագործներ, վո-
րոնք իրենց արհեստը բանեցնում են ուրիշ տեղերում, հե-
ռանալով ժամանակավորապես իրենց մշական բնակավայ-
րից: Պարզ ե, վոր այդպիսի արհեստավորները ունեն ավե-
լորդ ծախսեր:

Դրա համար վորոշված ե դրառում աշխատող արհեստա-
վորների յեկամուտը հարկել ավելի ևս պակաս տոկոսով,
այսինքն 30 տոկոսով:

Կոռպերացված արհեստավորի հարկի յենթակա այդ ձե-
պով հաշվված յեկամտից կատարվում է նորից 25 տոկոս
զեղջ:

Որինակ՝ մի դերձակ արտելի անդամ ե: Արտելը մտնում
է տնայնագործների կոռպերացիայի ցանցի մեջ. Այդ գեր-
ձակը դիցուք ունեցել է 600 ռ. յեկամուտ: Գյուղհարկով
հարկելու համար վերցվում է 50 տոկոսը, այսինքն 300
սուբլի:

Այդ գումարից նորից զիջվում է 25 տոկոս: Մնացորդ
225 ռ. դառնում ե գյուղհարկի յենթակա յեկամուտը:

Գյուղհարկից բոլորովին ազատվում են՝

Բատրակների աշխատավարձը, գյուղում և շրջանում
ընտրովի պաշտոններ տանելու համար ստացվող աշխատա-
վարձը, գյուղական և շրջանային բժշկական, անասնաբու-
ժական, դատական, գյուղատնտեսական, հողաշինարարա-
կան, անտառային, կուլտուր-լուսավորական, միլիցիայի,
դպրոցական և հիվանդանոցների աշխատակիցների աշխա-
տավարձը:

Գյուղհարկից ազատվում ե նաև կարմիր բանակայիննե-
րի ամեն տեսակի գոհացումները (բավարարումները):

9. ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՑԻՆԵՐԻ, ՊԱՀԵՍՏՈՒՄ ԳՏՆՎՈՂ
ԶԻՆԱՊԱՐՏՆԵՐԻ, ՊԵՏ. ՔԱՂ. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԶՈՐԱՄԱ-
ՍԵՐՈՒՄ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԵԵԿ
ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻՆ ՏՐՎԵԼՈՒ ՅԵՆ ԲԱՑԻ ՎԵՐՈՇԻՇՅԱԼ
ԲՈԼՈՐ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՆԱԵԿ ՀԵՏԵՎԿՅԱԼ
ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ա) Յեթե ընտանիքի մեջ չկան աշխատանքի բնդունակ
ուրիշ տղամարդիք, անտեսությանը ընկնող մինչև 10 սուրիի
հարկը զիջվելու յի 100 տոկոսով:

10 ռ.	ավելի	մինչև	15 ռ.	հարկից զիջվելու	յի 90	տոկոսով
15 ռ.	»	»	20 ռ.	»	»	75 »
20 ռ.	»	»	30 ռ.	»	»	50 »
30 ռ.	»	»	50 ռ.	»	»	35 »
50 ռ.	»	»	75 ռ.	»	»	25 »
75 ռ.	»	»	100 ռ.	»	»	10 »
100 ռ.	»	»	— ռ.	»	»	5 »

բ) Սակայն յեթե ընտանիքում կան աշխատանքի բնդու-
նակ նաև ուրիշ տղամարդիք, անտեսության ընկնող մինչև
10 ռ. հարկը գարձյալ զիջվելու յի 100 տոկոսով:

10 ռ.	ավելի	մինչև	15 ռ.	հարկից զիջվելու	յի 75	տոկոսով
15 ռ.	»	»	20 ռ.	»	»	50 »
20 ռ.	»	»	30 ռ.	»	»	35 »
30 ռ.	»	»	50 ռ.	»	»	25 »
50 ռ.	»	»	75 ռ.	»	»	15 »
75 ռ.	»	»	— ռ.	»	»	5 »

Որինակ՝ մի անտեսություն ունի կարմիր բանակային և
բացի այդ ընտանիքում կտ նաև աշխատանքի բնդունակ տը-
ղամարդ։ Եթա հարկի գումարը 22 ռ. յի։ Այդ 22 ռ. պետք է
զիջվի 35 տոկոս, այսինքն 7 ռ. 70 կոտ.։ Տնտեսությունը
հարկ պիտի վճարի ընդամենը 14 ռ. 30 կոտեկ։

Իսկ յեթե ընտանիքում բացի բանակայինից չինի ուրիշ

աշխատաւնակ տղամարդ, հարկից պետք է զիջվի 50 տոկոս,
11 ռուբլի:

Կարմիր բանակայինների այս արտոնությունները տըր-
վում ե գյուղական անհատ տնտեսություններին:

Կոլտնտեսությունների նկատմամբ կարմիր բանակային-
ների արտոնությունը կիրառվում է ուրիշ ձևով, այն ե՝ կար-
միր բանակայինին հասնող շնչապատկան յեկամուտը հան-
վում ե կոլտնտեսության ընդհանուր յեկամուից և հարկի չի
յենթարկվում:

10. ԶԱՆԱԶԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բացի վերոհիշյալից, մի շաբթ արտօնություններ են
սահմանված նաև գաղթվողների, տարբերային ազետներից
վնասված և մի շաբթ այլ անտեսությունների համար, (տես
ՀՍԽՀ Գյուղհարկի որենքը 61, 62 և 69—79 հոդվածները),
վորոնք տրվում ենին նաև անցյալ տարի և վորոնք այս տարի
ավելի լայնացված և կոլեկտիվ անտեսությունների համար:

Բացի այդ կուլակային բանությունից տրված առանձին
աշխատավորական տնտեսություններին որենքով տրվում ե
նոր արտոնություն:

Կուլակների ձեռքով սպանված աշխատավորների այրի-
ներին և վորբերին պատկանող անտեսությունները՝ ազատ-
վում են հարկից 3 տարով:

Սրանք են գլխավոր այն արտօնությունները, վորոնք
տրվում են միայն գյուղացիական կոլեկտիվ և անհատ աշ-
խատավորական տնտեսություններին:

Այս բոլոր արտօնություններից զրկվում են կուլակային
տնտեսությունները, վորոնք ինչպես անցյալ տարի, այնպես
ել այս տարի պիտի հարկվեն անհատական կարգով և չտո
ավելի բարձր դրույժըներով:





ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0002151

[054.]

A II
24276